

Արձանագրություն թիվ 1
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի 2015 թվականի
փետրվարի 27-ի նիստի

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Նիստին մասնակցում էին՝

- Հ. Հովհաննիսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության
- Ա. Մարգարյան - վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի
- Ս. Մինասյան - քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության ,
- Գ.Բաղդասարյան - մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
- Լ. Գինոսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,
- Ա.Ադամյան - կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.
- Ա.Նիկողոսյան - Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն, հանձնաժողովի անդամ.
- Ռ. Ռաշոյան - Հաշմանդամների <<Փյունիկ>> միության Գյումրու մասնաճյուղի ծրագրերի ղեկավար, հանձնաժողովի անդամ.
- Ա. Գյունաշյան - Գյումրու <<Հաշմանդամների ասոցիացիա>> ՀԿ նախագահ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:

Նիստին մասնակցում էին հրավիրվածներ՝

- Գ.Տարապան - <<Հայկական Կարիտաս>> ԲՀԿ գործադիր տնօրեն.
- Ա.Դիլանյան - <<Հաշմանդամների մարզամշակութային կենտրոն>> ՀԿ նախագահ.
- Ս.Գրիգորյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ.

Օրակարգ – 2014 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում հաշմանդամների շրջանում

իրականացված աշխատանքների մասին:

/Հաղորդում՝ Հ.Արշակյան - Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով
մարզային

հանձնաժողովի նախագահ/:

Լսեցին - ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի տեղակալ
Հ.Արշակյանի

հաղորդումը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում 2014
թվականի

ընթացքում իրականացված աշխատանքների մասին:

Ելույթ ունեցան՝ Ս.Մինասյանը, Ռ.Ռաշոյանը, Լ. Գինոսյանը, Ս.Գրիգորյանը:

Նիստում քննարկումներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի
մարզպետի

տեղակալ Հ. Արշակյանը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նախագահ Հ.Արշակյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Համագործակցել հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող

կազմակերպությունների հետ:

3. Օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց կրթական և
մասնագիտական ուսուցման ծրագրերում:

4. Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող բժշկական
օգնության ծրագրերի իրականացման, ինչպես նաև վերականգնողական,
տեխնիկական և օժանդակ այլ պարագաներով ապահովման աշխատանքներում:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Գյունաշյան